ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

ք. Եղեգնաձոր, Շահումյան 5 **Հեռ. /374010/ 287401, 2 25 22**

<<_____>> _____2020թ. N ---------- **Ֆաքս/374010/ 28 18 32**

<<Փաստինֆո>> գործակալության լրագրող
Սոնա Գևորգյանին

Հարգելի տիկին Գևորգյան

Ի պատասխան ՀՀ Վայոց ձորի մարզպետին 2020 թվականի հունվարի 10-ին հասցեագրված (մտից փաստաթուղթ թիվ 0101) Ձեր հարցման՝ հայտնում ենք, որ մարզպետարանի պարգևատրված աշխատակիցների թվի, գումարի չափի, երեք անգամ և ավելի պարգևատրված, Ամանորի կապակցությամբ պարգևատրված աշխատակիցների քանակի և գումարի չափի, մարզպետի, մարզպետի տեղակալի, գլխավոր քարտուղարի Ամանորի կապակցությամբ պարգևատրված լինելու կամ չլինելու մասին տեղեկատվություն չենք կարող տրամադրել, քանի որ մարզպետարանում կատարել ենք հարցում, սակայն չենք ստացել աշխատակիցների համաձայնությունը՝ իրենց տվյալները փոխանցելու համար: <<Անձնական տվյալների պաշտպանության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձնական տվյալները մշակվում են օրինական և որոշակի նպատակներով և առանց տվյալների սուբյեկտի համաձայնության չեն կարող օգտագործվել այլ նպատակներով: Ինչպես նաև <<Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ անձնական տվյալները (վարձատրության մասին տեղեկատվությունը), առանց տվյալների սուբյեկտի համաձայնության չեն կարող տրամադրվել:

Ձեզ հետաքրքրող, հրապարակման ենթակա հարցերի մասին տեղեկատվություն կարող եք ստանալ՝ այցելելով ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի vdzor.mtad.am պաշտոնական կայքը:

Недействительная подпись

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550 **Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Կատարող՝ Իրավաբանական բաժին
Ս.Մխիթարյան, Հեռ. (0281) 2 55 95